«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հասարակագիտության դասի դաստիարակչական դերն ու նշանակությունը:

ԱՌԱՐԿԱ՝ Հասարակագիտություն:

ՀԵՂԻՆԱԿ՝ Հերմինե Խաչատրյան :

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սևանի Մ. Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…… 3
ԳԼՈՒԽ 1.ՀԱՍՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ……. 5
ԳԼՈՒԽ 2.ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ Գ. ՆԺԴԵՀԻ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՒՄ……10
ԳԼՈՒԽ 3. «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ……12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..17
ՕԳՏԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..20

Ներածություն

Դաստիարակություն բառը ծագում է հին պարսկերենից: Պարսկաստանում դաստիարակ էին անվանում այն փոխարքային,որը ղեկավարում էր աճող սերնդի հոգևոր զարգացումը:Դաստիարակությունը կարելի է ըմբռնել տարբեր իմաստներով,նախ որպես օբյեկտիվ հասարակական երևույթ՝կյանքի դաստիարակություն :

Դաստիարակությունը սկզբնավորվել է մարդու ծագման հետ միասին,որպես աշխատանքային գոործունեության արդյունք:Կյանքի հետագա զարգացումն ու հարստացումը հասարակությանը կանգնեցրին իր անդամների զարգացումն ու ձևավորումը պլանավորելու,հատուկ կազմակերպելու անհրաժեշտության առաջ:

Դեռևս նախնադարյան հասարակության մեջ ցեղը,տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին իրենց առավել խելացի,փորձառու,ուժեղ մարդկանց,որոնք արդեն հատուկ կեր-պով,հատուկ պայմաններում,քիչ թե շատ հետևողականորեն կազմակերպում էին տվյալ հանրության երեխաների,աճող սերնդի ձևավորումն ու զարգացումը: Այսպես ծագեց դաստիարակության մի նոր տեսակ. հատուկ կազմակերպված հատուկ մարդու կողմից մեկ այլ մարդու դաստիարակելու գործընթաց: Դաստիարակությյունը դարձավ մասնագիտական գործունեության բնագավառ:Աստիճանաբար կատարելագործվեցին մանկավարժա-կան գործընթացի մասին գիտելիքներն ու փորձը: Դաստիարակության՝որպես մանկավարժական գործընթացի ամենաէական առանձնահատկությունը երկկողմանիությունն է, քանի որ նրան մասնակցում են երկու սուբյեկտներ՝դաստիարակը և սանը,որոք կարող են համագործակցել,պլանավորել դաստիարակելու ենթակա հատկանիշները և դրանք սանին փոխանցելու ,նրան հաղորդելու ուղիները,եղանակները,պայմանները,կազմակերպական ձևերն ու մեթոդները:

Լայն իմաստով դաստիրակությունը՝որպես բնական,տարերային օբյեկտիվ հասրակական գործընթաց, ուսումնասիրվում է էթիկայի, էսթետիկայի,փիլիսոփայության,իրավագիտության և այլ հասարակական գիտությունների կողմից: Մանկավարժական գիտության մեջ դաստիարակութ-յունը հասկացվում է որպես անձի վարքագիծ՝բնավորություն,հարաբերություն-

ների մշակույթ,այսինքն՝որպես բարոյական,աշխատանքային ,ֆիզիկական և գեղատական դաստիարակություն:Ուստի դաստիարակությունը անձի զարգացման և ձևավորման կազմակերպումն է,որը ներառում է նաև նրա ուսուցումն ու կրթությունը: Կրթությունը անհատի, հասարակության եւ պետության շահերից բխող ուսուցման եւ դաստիարակության գործընթաց է, նպատակաուղղված է ազգային եւ համամարդկային արժեքների ու փորձի կրող, հայրենիքի եւ մարդկության համար պատասխանատու, ազատ, բարոյական, նախաձեռնող, ստեղծագործող անհատի եւ քաղաքացու ձեւավորմանը, հանրության սոցիալական առաջընթացի ապահովմանը: Ժամանակակից կրթության նպատակն է բազմակողմանի զարգացած քաղաքացիական անձի դաստիարակումը: Հասարակագիտության ամբողջական ուսուցումն արդի հասարակական իրողությունների հրամայական պահանջն է, քանի որ նրա գործնական հետեւանքները անչափ կարեւոր են նոր սերնդի ճիշտ դաստիարակության համար:

Դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասրակական պատմական փորձի փոխանցման գործընթացն է:

ԳԼՈՒԽ 1.
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակից մանկավարժական գիտության մեջ կրթություն կատեգորիան ունի մի շարք մեկնաբանություններ: Կրթությունը կարող է դիտարկվել որպես հասարակության և զարգացող մարդու արժեք:Այն կարող է դիտարկվել նաև որպես համակարգ,որը ընդգրկում է ծրագրեր, չափորոշիչներ,կրթական հաստատություններ և բոլոր այն կազմակերպութ-յունները,որոնք մասնակցում են ուսուցման գործընթացի կազմակերպ-մանը:Սա վերաբերվում է պետության կրթական համակարգին:
Կրթված մարդը, ըստ Ա. Ա. Ռեանի եւ Ն. Վ. Բորդովսկու, ոչ միայն կենսագործունեության հիմնական ոլորտների իմացող եւ կարող մարդն է, այլ նաեւ մարդ, որի մոտ ձեւավորված է աշխարհայացք եւ բարոյական սկզբունքներ, իսկ հասկացությունները եւ զգացմունքները ստացել են արժանապատիվ եւ բարձրարժեք ուղղվածություն: Այսինքն կրթվածությունը ենթադրում է նաեւ դաստիարակություն: Կկրթության եւ դաստիարակության գործընթացները, նպաստում է մարդու զարգացմանը, ինչպես նաեւ խթանում է սովորողի ինքնադաստիարակման, ինքնակրթության եւ ինքնազարգացման գործընթացները:

Դաստիարակության էության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Ա. Վ. Մուդրակի կարծիքով մանկավարժական գրականության մեջ հասարակագիտության դասերին կարելի է առանձնացնել դաստիարակության մի քանի բնորոշումներ.

• դաստիարակությունը լայն իմաստով իրականացվում է կրթա-դաստիարակչական հաստատությունների համակարգի միջոցով,
• դաստիարակությունը, սոցիալական իմաստով, հասարակության ազդեցությունն է մարդու վրա,
• դաստիարակությունը՝ ներառյալ դաստիրակչական աշխատանքը՝ նեղ մանկավարժական իմաստով, դա երեխաների մոտ որոշակի հատկանիշների, հայացքների, համոզմունքների համակարգի ձեւավորումն է,
• դաստիարակությունը բավականաչափ նեղ իմաստով կոնկրետ

դաստիարակչական խնդիրների լուծումն է, օրինակ, կոնկրետ բարոյական հատկանիշի դաստիարակումը:
Ըստ Մ. Ի. Ռոժկովի4 դաստիարակությունը բնութագրվում է հետեւյալ հատկանիշներով.
• դաստիարակվողի վրա ազդեցության նպատակաուղղվածությունը,
• այդ ազդեցությունների սոցիալական ուղղվածությունը,
• երեխաների մոտ որոշակի նորմերի յուրացման համար պայմանների ապահովում,
• մարդու կողմից սոցիալական դերերի համալիրի յուրացում,
• անհատի ձեւավորման եւ զարգացման գործընթացի կառավարում,
• ինքնահիրացան համար պայմանների ձեւավորում եւ ապահովում:
Սակայն ոչ բոլոր հետազոտողներն են դաստիարակությունը դիտարկում որպես աշակերտի վրա նպատակաուղղված ազդեցություն: Նրանք գտնում են, որ դաստիարակությունը անհատի զագացման նպատակաուղղված կառավարումն է եւ մարդու զարգացման համար պայմանների ստեղծումը:
Դաստիրակություն հասկացության էության ժամանակակից մոտեցմամբ այն բնութագրվում է ոչ թե որպես երեխայի վրա արտաքին միակողմանի ազդեցություն, այլ համատեղ կենսագործունեության ժամանակ որպես մեծահասակների եւ երեխաների փոխազդեցություն, համագործակցություն:
Դաստիարակությունը նպատակաուղղված գործունեություն է, որի ժամանակ մեծահասակների եւ երեխաների փոխազդեցության ու համագործակցության արդյունքում ձեւավորվում է երեխաների մոտ որոշակի հատկանիշների, հայացքների, համոզմունքների համակարգ՝ կրթադաստիարակչական հաստատությունների համակարգի միջոցով:
Ըստ էության յուրաքանչյուր ուսուցիչ ինքն է ձեւավորում իր գործունեությունը, ելնելով այն բանից, թե ինքն ինչպես է հասկանում դաստիարակություն հասկացության էությունն ու նշանակությունը:Ուսուցչի հասարակագիտության դասի դաստիարակչական գործունեությունը վերածվում է.
• ազդեցության,
• փոխգործունեության եւ աջակցության,
• անդրադարձ ինքն իրեն, իր ընդունակություններին՝ ինքնազարգացման եւ ինքնակատարելագործման համար:

Փաստորեն, դաստիարակչական գործունեությունը դիտարկվում է որպես դաստիրակվողի վրա հասարակական ազդեցություն, փոխազդե ցություն նրա հետ, նրա անհատականության բացահայտում, աջակցություն նրա ինքնազարգացմանը եւ ինքնադաստիարակմանը: Պրակտիկայում կիրառվում են դաստիարակության մի քանի տարբերակներ.

.Առաջին տարբերակը հիմնվում է բիհեւիորիզմի տեսության վրա, որը դիտարկում է մարդուն որպես անհատականության: Այս տեսության կողմնակիցների կարծիքով պատվերով կարելի է ձեւավորել անհատի ցանկացած տիպ, քանի որ անհատականությունը մարդու վարքագիծն է: Խթանները, որոնք առաջացնում են ռեակցիաներ, արարքներ, գործողություններ, դրական եւ բացասական սանկցիաներն են, պարգեւատրումները եւ պա տիժները:

Այս տարբերակի դեպքում կարելի է կիրառել բացատրական- իլիոստրացիոն մեթոդը, որի հիմքում ասոցիացման տեսությունն է /Ջ. Լոկկ, 17-դար/, որի էությունը կայանում է հետեւյալում՝

- ✓ Դաստիարակչական ցանկացած գործողության մեխանիզմ է հանդի-
- ✓ սանում ասոցիացիան,
- ✓ դաստիակությունը հիմնվում է զգայական ճանաչողության վրա, դրա
- ✓ պատճառով էլ ուսումնական գործունեության հիմնական խնդիրն է սովորողի գիտակցությունը հարստացնել կերպարներով եւ ներկայա- ցումներով,
- ✓ ակնառու կերպարները մղում են գիտակցությանը համեմատությունների հիման վրա ընդհանրացումներ կատարելու,
- ✓ ասոցիացման դաստիարակության հիմնական մեթոդը վարժությունն է:

• Երկրորդ տարբերակը դաստիարակության ավելի ժամանակակից ե- ղանակ է եւ կապված ուսուցչի եւ աշակերտի փոխազդեցությունների հետ: Ընդ որում, այն դիտարկվում է ոչ թե որպես երեխայի վրա ազ- դեցություն, այլ մեծահասակների եւ երեխաների միջանձնային համա- գործակցություն, փոխազդեցություն՝ համատեղ կենսագործունե- ության ոլորտում: Այս տարբերակի դեպքում կիրառվում են դաս- տիարակության մի քանի մեթոդներ.

- ✓ Երկխոսական-գործնական մեթոդ, որի դեպքում մանկավարժը ստեղծում է անվտանգ երկխոսության իրավիճակ, որտեղ դաստիարակը եւ դաստիարակվողը կարող են միմյանց ներկայացնել իրենց նպատակները, հետաքրքրությունները, արժեքները, ինչից հետո նրանք պայմանավորվում

են համատեղ գործողություններ կատարելու կամ հաղորդակցվելու որոշակի կանոններով, որոնցում հավասարապես արտացոլվում են երկու կողմերի հետաքրքրությունները: Այնուհետեւ սկսվում է մանկավարժի եւ սովորողի համատեղ գործունեությունը: Համաձայն այս մեթոդի յուրաքանչյուր մարդ ոչ բարձր է եւ ոչ էլ ցածր մեկ այլ մարդուց: Հետեւաբար, դաստիարակողը իր վստահելի հաղոր- դակցմամբ կարող է օգնել աշակերտին գիտակցել իր հետաքրքրու- թյունները, խնդիրները եւ փոփոխության ուղիները, բայց չպետք է նրա փոխարեն իր վրա վերցնի պատասխանատվությունը եւ զբաղվի երեխայի վերադաստիրակությամբ:

- ✓ Զարգացնող դաստիարակություն, որը հիմնված է մտածողության մե- խանիզների ձեւավորման վրա, այլ ոչ թե հիշողության հիման վրա: Այս դեպքում երեխան ինքնուրույն սուբյեկտ է, որը փոխազդեցության մեջ է շրջակա միջավայրի հետ: «Ուսուցիչ աշակերտ» հարաբերությունը գործընկերային, գործնական համագործակցություն է, որի անհրաժեշտ պայմանը երկխոսությունն է:
- ✓ Անհատական-կողմնորոշիչ զարգացնող դաստիրակություն, որում հատուկ նշանակություն է տրվում կենսագործունեության փորձին, որը աշակերտը ձեռք է բերում ընտանեկան, սոցիալ-մշակութային միջավայրի կոնկրետ պայմաններում՝ նրանց կողմից մարդկանց եւ առարկաների աշխարհի ընկալման գործընթացում:Այս մեթոդը կիրառելու համար նախ՝ բացահայտում են աշակերտի ինտելեկտի անհատական առանձնահատկությունները, նրա ադեկվատության աստիճանը գործունեության կոնկրետ եղանակին, երկրորդ՝ յուրաքանչյուր աշակերտի համար կազմվում է ուսուցման եւ դաստիարակության անհատական ծրագիր՝ հիմնված նրա անհատական առանձ նահատկությունների վրա: Այդ ծրագիրը պետք է ճկուն լինի, հարմարեցված աշակերտի հնարավորություններին, ինչպես նաեւ փոփոխվի ուսուցման ազդեցությամբ նրա զարգացմանը զուգընթաց:

• Երրորդ տարբերակը պահանջում է մանկավարժի կողմից աջակցություն երեխայի անհատականության բացահայտմանը: Այստեղ կիրառվում են հետեւյալ մեթոդները.

- ✓ Տարիքային մոտեցում, որը նպաստում է հասկանալու տարիքի հետ կապված դաստիարակության խնդիրները եւ դրանց արդյունավետ լուծմանն ուղղված պայմանների ձեւավորմանը:
- ✓ Անհատական մոտեցումը, դա 1) մանկավարժական այնպիսի սկզբունք է, որի համաձայն ուսումնադաստիարակչական գործընթացում աշխատելով խմբում մանկավարժը յուրաքանչյուր աշակերտին ցուցաբերում է անհատական մոտեցում՝ հաշվի առնելով նրա անձնային առանձնահատկությունները, 2)երեխայի հետ հաղորդակցվելիս կողմնորոշվել նրա անձնային առանձնահատկություններից ելնելով, 3)ուսուցման ընթացքում հաշվի առնել երեխայի անձնային առանձնահատկությունները, 4)հոգեբանամանկավարժական պայ-մանների ձեւավորում ոչ միայն բոլոր սովորողների, այլեւ յուրաքանչյուր երեխայի համար առանձին-առանձին:Դաստիարակության անհատական մոտեցումը ենթադրում է, որ դաստիարակչության գործընթացում պետք է հաշվի առնել երեխաների առանձնահատկությունները, քանի որ ցանկացած մանկավարժական ազդեցություն անցնում է յուրաքանչյուր դաստիարակվողի անձնային առանձնահատկությունների պրիզմայով: Այս դեպքում պետք է հաղթահարել նաեւ ընտանեկան դաստիրակության բացթողումները, կամքի թուլությունները, մոտիվացվելու բացակայությունը:

  .Չորորրդ տարբերակը դիտարկում է այնպիսի տեխնոլոգիաների կի-ռառում, ինչպիսիք են մանկավարժական աջակցությունը, խնդրահարույց ուսուցումը, որոնք նպաստում են երեխայի ինքնակատարելագործմանը: Աջակցությունը նշանակում է նպաստել հասարակության մեջ մարդու ինքնուրույնության զարգացմանը, մղել երեխային ինքնաճանաչման, ընտրություն կատարելուն եւ ինքնազարգացման, ենթադրում է երկխոսության բացախոսություն, անկեղծություն:Ուսուցիչը պետք է երեխային կամաց-կամաց դուրս բերի «զոհի» պասիվ կարգավիճակից եւ տանի ակտիվ մարդու դիրքի, որը ինքնուրույն կարող է դուրս գալ խնդրահարույց իրավիճակից: Աջակցության կարեւոր պայման է հանդիսանում պայմանագիրը, որը եւ մանկավարժին եւ երեխային ստիպում է կատարել պայմանավորված պարտականությունները եւ չխանգարել մեկմեկու իրենց գործունեությունը իրականացնելիս:

ԳԼՈՒԽ 2.
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ Գ. ՆԺԴԵՀԻ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՒՄ

Չունենալով սեփական պետություն՝ հայությունը զրկված էր կրթության, դպրոցի նկատմամբ պետական հոգածությունից: Ավելին, հետապնդվում էին առաջադեմ, հայրենասեր մանկավարժները, սահմանափակ էին հայագիտական առարկաների դասավանդման հնարավորությունները: Այսպիսի պայմաններում իրականացվող կրթությունն ու ուսուցումը չէին կարող բավարարել ժամանակի պահաջները, երբ երկրների սոցիալ-քաղաքական եւ տնտեսական հակասությունները բերում էին պատերազմներ եւ այլ բազմաթիվ արհավիրքներ: Գ.Նժդեհն է պատկերավոր ընդգծել հայ իրականության ունեցածը ընդամենը “գաղութային դպրոց” էր: Ինչ խոսք, այս իրողությունն ունի նաեւ մանկավարժական-կրթական հարթություն: Այդ “մեծ գործեր” հասկացության ներքո Գ.Նժդեհը նկատի ուներ ոչ միայն մեր ժողովրդին հասած աղետները, այլեւ դրանց հաղթահարումը, իսկական վերելքի ապահովումը: Սոցիալ-հասարակական կտրվածքով, այս իրողությունները իրացնում է մտավորականությունը: Մեծ է մտավորականության դերը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Այնինչ, հայ մտավորականության զգալի մասը, գրում է Գ.Նժդեհը. “չի հասկանում, որ էականը քաղաքական վարչաձեւը չէ, այլ անհատի եւ զանգվածների վերածնունդը, հոգեփոխությունը”,երբ ժողովրդի մեծ մասի կյանքում “միահեծան կերպով իշխում են չարությունը, նախանձը, գռեհկությունը, որովհետեւ վերանորոգչական ճիգի, խանդի, ուրախության պակասը նրան դարձրել է զոհ հոգեւոր վաղաժամ ծերության /չարություն/, երկչոտության /նենգություն/, սկեպտիկության /ժխտամոլության/: Եվ ժողովրդին, ընդհանրապես, եւ մտավորա- կանությանը, մասնավորապես, “պակասում է նոր գիտակցությունը, նոր աշխարհըմբռնումը”:Ինչպես տեսանելի է, Գ.Նժդեհը խիստ կարեւորում է քաղաքական, գաղափարախոսական, բարոյական ողղություններով դաստիարակության դերը: Իր պատմական յուրօրինականությամբ, խնդիրների բարդությամբ ու ինքնատիպությամբ հայ իրականումթյունը ենթադրում է նոր մոտեցումներ: Գ.Նժդեհը՝ ինքը դարձել է այդ մտածողության առաջին կրողներից մեկը: Շրջանառության մեջ են դրվել մի շարք նոր հասկացություններ, որոնք նորույթ են հասարակագիտական առկա՝ դասական եւ նոր դասական հարացույցերի, գիտահետա-զոտական ծրագրերի համար: Այսպես, այդ հասկացություններից նշենք.

ցեղակրոնություն, նրա դրսեւորումները՝ ցեղակրոն շարժում, ցեղակրոն կյանք, ցեղը որպես հանրության մի մաս, նրա ընտրանի, ժողովուրդ հասկացության նոր ընկալումը, ցեղի տականք, ցեղային ապրելակերպ, հայրենապաշտ դաստիարակություն, ինքնապաշտպանության գաղափարախոսություն եւ տերմիններ,որոնք ուղղակի մաս են կազմում հասրակագիտության տերմինաբանության մեջ:
Այսպես, ըստ Գ.Նժդեհի դպրոցներում գոյություն չունի "որեւէ գերիշխող գաղափար" "պակասում է բոլորին-դպրոցին...այն աստվածաշունչ զգացումը, որն իր մեջ խտացնում է
մարդկային բոլոր բարձր հատկությունները", ավելին՝ "չկա բարձր հայրե-նասիրությունը, հայրենապաշտությունը չկա...":Իսկ ինչ գաղափարական-քաղաքական մթնոլորտ էր տիրում հայկական դպրոցներում, Գ.Նժդե- հը նկատում է. "ամեն ինչից մի քիչ..." եւ "...վարդապետություններ, որոնք հաշտ չեն հայրենասիրության հետ", այնինչ հայրենասիրությունը պետք է լինի զգացում եւ գիտակցություն...
Ըստ էության, դպրոցը պետք է գոդծի ժամանակի պահանջներին համապատասխան, լուծի դաստիարակչական եւ կրթական խնդիրներ: Դաստիարակության գերխնդիրը ըստ Գ.Նժդեհի հայրենապաշտության եւ հայենասիրության ձեւավորումն է, որը ապահովելու է հայրենիքի փրկությունը: Ընդհանուր հասարակական պահանջ լինելուց բացի, այն դիտարկվում է որպես կրթական համակարգի, առաջին հերթին դպրոցի հիմնական խնդիր, նպատակ:Այստեղից նա բխեցնում է հասարակական-մանկավարժական գործընթացի սկզբունք- ները, մեթոդները, մոտեցումները, անգամ առարկայացանկը: Գ.Նժդեհը հիմնավորում է նոր, ըստ էության, ինտեգրացված առարկայի՝ հայրենա- գիտության անհրաժեշտությունը. հասրակագիտություն և հայրենագիտություն,այս երկու դեպքում էլ աշակերտի դաստիարակությունում առկա է հասարակագիտությունը: Պատահական չէ, որ Գ.Նժդեհը դպրոցը ներկայացնում է եւ որպես ամբիոն, եւ որպես տաճար: Գ.Նժդեհը կարեւորում է խոսքի կուլտուրան, դասավանդողի ներշնչվածությունը՝ "ոչ միայն որպես գեղեցիկ խոսք... այլեւ զգացում եւ գիտակցություն": Գ.Նժդեհը, իհարկե, չի մոռանում օրինակի անփոխարինող դերը թե դաստիարակության, եւ թե ուսուցման գործընթացներում: Նկատված մեթոդները, հնարների բազմազանությունը վառ կերպով ապացուցում են նաեւ նժդեհյան դաստիարակության եւ ուսուցման սկզբունքների ինքնատիպությունը: Ընդգծենք այդ սկզբունքներից մի քանիսը. Դաստիարակության եւ ուսուցման կապը իրականության հետ, արագ արձագանքը ժամանակի խնդիրների նկատմամբ, սովորողների պահանջների նկատմամբ ուշադրությունը, գիտականությունը, մատչելիությունը,

բարոյագեղագիտական, գաղափարական բարձր մակարդակը, հոգեբանական-տարիքային առանձնահատկությունների հաշվառումը եւ այլն: Գ.Նժդեհը լինելով իրապաշտ անձնավորություն իր մտածողությամբ եւ աշխարհայացքով, կրթության ոլորտում քայլում էր նրա տրամաբանությանը համընթաց: Այսպես, նա կրթության, մանկավար- ժության օրվա հորցերին նայում է ապագայի տեսանկյունից, ապագա հա-սարակական հարաբերությունների անհրաժեշտ մարտահրավերների դիտակետից: “Կգա ժամանակը, որ ամեն բանից առաջ կմտածեն դաստիարակության մասին...ընդունեք, որ նա եկել է...եկել է արդեն մեզ համար... նման դաստիարակությամբ պատրաստենք մեր ապահով ապագան,- գրում է Գ.Նժդեհը: Այդ ապագա կրթա-դաստիարակչական հայեցակարգը ամրագրվում է հատկապես “հայրենապաշտ եւ գաղափարապաշտ” երիտասարդության առկայությամբ, որով ամբողջանում է երկրի, ազգի “ապագան եւ փրկությունը.հասարակությունը այն պետք է ընկալի,հասարակագիտության դասը հենց դրա համար է:
https://youtu.be/Wopytc8SoPw

ԳԼՈՒԽ 3.
«ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդավարացման գործընթացները պահանջում են քաղաքացիական այնպիսի որակների դաստիարակում, ինչպիսիք են սեփական իրավունքների ու պարտա-կանությունների գիտակցումն ու իրականացումը, դրական մասնակցությունն ու առաջնորդությունը, հասարակության իդեալներին հասու լինելու եւ դրանց համար պայքարելու կարողությունն ու ցանկությունը եւ այլն: Ժո-ղովրդավարական հասարակության քաղաքացիներն իրենք պետք է լինեն

սեփական կրթության պատասխանատուները, պետք է կարողանան դնել համապատասխան նպատակներ ու հասնել դրանց, պետք է ի վիճակի լինեն արժեւորել իրենց տեղն ու դերը հասարակության մեջ եւ կատարել այն գործառույթները, որ հասարակությունն իր հերթին կակնկալի նրանցից: Ժողովրդավարական հասարակության քաղաքացիներ կրթելու այս եւ մի շարք այլ նպատակների հասնելու տեսանկյունից անգերազանցելի է «Հասարակագիտության» կրթական նշանակությունը: «Հասարակագիտությունը», իր մեջ ներառելով գիտելիքներ մի շարք կարեւորագույն բնագավառներից, օժտված է վիթխարի կրթական ներուժով, քանի որ այն հիմնական առարկան է, որ ձեւավորում է մարդու աշխարհայացը, մտածելակերպը (մենթալիտետ), արժեքային համակարգը, ինչպես նաեւ վերաբերմունքն իր եւ այլոց հանդեպ: «Հասարակագիտության» ուսուցումը ապագա քաղաքացուն հնարավորություն կտա իր առջեւ ծառանալիք խնդիրների պատասխանը որոնել ոչ թե տարերայնորեն, տեղեկատվական հեղեղի ճնշման ազդեցությամբ, այլ օգտագործելով այն բոլոր հմտությունները, գիտելիքները եւ արժեքային մոտեցումները, որ նրա սեփականությունն են դառնալու դպրոցական նստարանից:Իսկ ի՞նչ անել,ինչպե՞ս դաստիարակել.

1.«Հասարակագիտությունը», ի դեմս իր կարեւորագույն բաղադրիչի՝ փիլիսոփայության, ունի հազարամյակների պատմություն: Մյուս բաղադրիչները (բարոյագիտություն, գեղագիտություն, իրավագիտություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն) աստիճանաբար առանձնացել են փիլիսոփայությունից՝ ավելի ու ավելի կարեւորվելով ժամանակակից հասարակության պայմաններում: Տարբեր դարաշրջաններում հզորության են հասել այն քաղաքակրթությունները կամ ժողովուրդները, որոնք կարողացել են ստեղծել կենսահաստատ փիլիսոփայական հզոր համակարգեր: Իսկ ժամանակակից աշխարհի ճգնաժամը հաճախ բացատրվում է այսօրվա իրողություններն ու պահանջները արտացոլող համակողմանի հասարակագիտական համակարգերի բացակայությամբ: Փիլիսոփայական մոտեցման շնորհիվ Հին Հունաստանում ստեղծված կրթական համակարգը՝ Պայդեյան, այսօրվա ժողովրդավարական կրթության ջատագովները համարում են չափանիշ, քանի որ Պայդեյայի կրթական համակարգում դրվում է կրթության հիմքերի որոնման, կրթության միջոցով մարդու ինքնաստեղծման ու ինքնակատարելագործման խնդիրը:

2. «Հասարակագիտությունը», որպես հոգեւոր մշակույթի կարեւորագույն տարր, օժտված է անձի համակողմանի ձեւավորման, նրա մտավոր, ստեղծագործական եւ հաղորդակցական կարողությունների զարգացման ահռելի ներուժով: Եթե այլ առարկաները, իրականացնելով իրենց կոնկրետ խնդիրները, հընթացս նաեւ նպաստում են անձի ձեւավորմանը, ապա «Հասարակագիտության» հիմնական գործառույթն անձի ստեղծումը եւ ինք- նաստեղծումն է: «Հասարակագիտության» ուսումնասիրումը սովորողներին կօժտի ինքնուրույնությամբ, որի շնորհիվ ուսուցումը ոչ թե կընկալվի որպես պարտադրանք, այլ որպես յուրաքանչյուր մարդու հնարավորությունները մեծացնող գործոն: Սովորողները կհասկանան ինքնախնամքի գաղափարը եւ կգիտակցեն իրենց պատասխանատվությունն իրենց իսկ առջեւ որպես մշակութային ինքնարարումի ձգտող էակներ: «Հասարակագիտության» դասավանդման արդյունքներից մեկը կլինի այն, որ անձնային հարթության մեջ մարդիկ կդադարեն թաքնվել հասարակության կամ որեւէ խմբի հետեւում եւ կհասկանան իրենց անհատականության զարգացման գործում իրենց իսկ անփոխարինելի դերը:
3. «Հասարակագիտությունն» ամբողջովին եւ մանավանդ քաղաքա- ցիական կրթության բաղադրիչի միջոցով կնպաստի ժողովրդավարական հասարակության քաղաքացու ձեւավորմանը, ժողովրդավարության հիմնարար արժեքների յուրացմանն ու, այդ ամենի արդյունքում, քաղաքա- ցիական հասարակության ձեւավորմանը:
4. Իրավական գիտելիքները, որպես «Հասարակագիտության» կարեւորագույն բաղադրիչ, հնարավորություն կտան տարբերակել իրավունքի հետ առնչվող խնդիրները, հասկանալ դրանց իրավական ու ոչ իրավական լուծումների տարբերությունը, յուրացնել ու գնահատել օրենքների եւ օրինականության նշանակությունը: Ի վերջո՝ դառնալ իրավագիտակից, օրինապաշտ եւ ակտիվ քաղաքացիներ:
5. Բարոյագեղագիտական բաղադրիչը հնարավորություն կտա իրականությունը վերլուծել բարոյական եւ գեղագիտական հասկացությունների տեսանկյունից, տարբերակել վեհը, գեղեցիկը, բարին ու ձգտել շրջապատող աշխարհում, որքան հնարավոր է, նպաստել դրանց:
6. «Հասարակագիտության» ամբողջական ուսուցումն արդի հասարակական իրողությունների հրամայական պահանջն է, քանի որ նրա գործնական հետեւանքները անչափ կարեւոր են նոր հասարակական հարաբերությունների

ձեւավորման համար: Գործնական առումով շատ կարեւոր է, որ սովորողներն ի վիճակի լինեն նախագծեր իրականացնել, որոնել- գտնել համայնքին հուզող խնդիրները, առաջարկել դրանց լուծման ուղիներն ու հետամուտ լինել դրանց լուծմանը: Գործնականում կարեւոր է, որ սովորողների մեջ ձեւավորվեն ակտիվ քաղաքացիության դիրքորոշում, իրավունքները պաշտպանելու, ինչպես նաեւ պատասխանատվությունն իրականացնելու կամք եւ հմտություններ:
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթական համակարգը ներկայումս գտնվում է անցումային փուլում՝«Հասարակագիտության» դասավանդման ռազմավարական խնդիրների շարքում պետք է դիտարկվեն հետեւյալները.
1. Արդի աշխարհում բազմակարծության ընդունմամբ հանդերձ՝ մրցակցող գաղափարախոսություններից հայոց մտածելակերպի համար ամենաընդունելի աշխարհայացքային կողմնորոշիչների մշակում: Այդ կողմնորոշիչների հիման վրա հայոց արժեհամակարգի՝ սովորողների համար հասկանալի ձեւակերպում, միաժամանակ հաշվի առնելով համամարդկային լավագույն արժեքներն ու մարդասիրական աշխարհայացքը:

Կարեւոր է, որպեսզի դպրոցական հասարակագիտական կրթության բովանդակությունը ուղղված լինի հայրենասիրության, քաղաքացիության դաստիարակմանը, հայոց ազգային ինքնագիտակցության բարձրացմանն ու հայոց եւ համաշխարհային մշակութային արժեքների գնահատմանն ու պահպանմանը:
2. Դպրոցում «Հասարակագիտության» դասավանդման նոր կառուցվածքի ստեղծում, որը հնարավորություն կտա ապահովել ուսուցման ազգային հիմքը՝ սովորողի մեջ ձեւավորելով մարդու եւ հասարակության մասին գիտելիքների ամբողջական համակարգ: Ընդ որում, այդ գիտելիքների համակարգը կրթության յուրաքանչյուր փուլում կունենա իր յուրա- հատկությունները՝ ելնելով սովորողների շահերից:
3. Տեսական դրույթների զուգադրում սովորողների գործնական աշխատանքների եւ, ընդհանրապես, առօրյա կյանքի հետ: Այդ առումով կարեւոր է, որ «Հասարակագիտության» ուսուցումը դուրս գա դասարանների պատերից ու դառնա ուսուցում բնության մեջ, փողոցում, գործարար կազմակերպություններում, թանգարաններում եւ այլուր: Դպրոցն ինքը պետք է դառնա ժողովրդավարության մոդել, որպեսզի հասարակագիտական գիտելիքի եւ առկա իրական մարդկային հարաբերությունների միջեւ անջրպետ չառաջանա:

«Հասարակագիտության» ուսուցման ժամանակ պետք է արծարծվի նաեւ հասարակական հարաբերությունների իդեալի խնդիրը եւ աշակերտը պետք է ընկալի իդեալների իրականանալի լինելը եւ հետամուտ լինի դրանց իրագործմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, արդի հայ հասարակության պահանջին համապատասխան՝ ներկայումս ժամանակակից դպրոցում դաստիարակչական գործունություն իրականացնելիս յուրաքանչյուր մանկավարժ պետք է հնարավորություն ընձեռնի երեխային ինքնուրույն մտածել, ձեւակերպել խնդիրներ եւ ինքնուրույն գտնել լուծումներ, բայց իր վերահսկողության ներքո: Այս առումով, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները պետք է լինեն համագործակցային, որի հիմքում պետք է դրվեն աշակերտի անհատական առանձնահատկությունները, ինչից ելնելով միայն կարելի է կիրառել այս կամ այն մեթոդը, ինչն էլ կբերի սովորողի անհատականության ձեւավորմանը:

Կրթությունը անհատի, հասարակության եւ պետության շահերից բխող ուսուցման եւ դաստիարակության գործընթաց է, նպատակաուղղված է ազգային եւ համամարդկային արժեքների ու փորձի կրող, հայրենիքի եւ մարդկության համար պատասխանատու, ազատ, բարոյական, նախաձեռնող, ստեղծագործող անհատի եւ քաղաքացու ձեւավորմանը, հանրության սոցիալական առաջընթացի ապահովմանը: Ժամանակակից կրթության նպատակն է բազմակողմանի զարգացած քաղաքացիական անձի դաստիարակումը: Զարգացող հասարակությանը հարկավոր են ժամանակակից կրթված, բարոյական, ձեռներեց մարդիկ, որոնք ընտրության իրավիճակում ընդունակ են ինքնուրույն որոշումներ ընդունել, ունեն պատասխանատվության զգացում երկրի, նրա սոցիալ-տնտեսական բարգավաճման նկատմամբ: Կրթության համակարգը պետք է պատրաստի մարդկանց, որոնք կարող են ոչ միայն ապրել քաղաքացիական հասարակության եւ իրավական պետության մեջ այլ նաեւ ստեղծել դրանք: Հանրակրթությունը նպատակաուղղված է լուծելու երկու կարեւորագույն խնդիր՝ ձեւավորել անհատ, որը կունենա բարոյական՝ ճշմարիտի, գեղեցիկի եւ բարու վրա հիմնված իդեալներ, եւ որն ունակ կլինի գործնական քայլերի՝ հանուն այդ իդեալների: Այդ տեսանկյունից գլխավոր նպատակադրումներից է՝ նպաստել մարդու, քաղաքացու իդեալների ձեւավորմանը եւ միաժամանակ դաստիարակել դրանց իրագործման համար անհրաժեշտ կամային որակներ: Հասարակագիտությունը որպես հոգեւոր մշակույթի կարեւորագույն տարր օժտված է անձի համակողմանի ձեւավորման, նրա մտավոր, ստեղծագործական եւ հաղորդակցական կարողությունների զարգացման ահռելի ներուժով: Եթե այլ առարկաները, իրականացնելովիրենց կոնկրետ խնդիրները, հընթացս նաեւ

նպաստում են անձի ձեւավորմանը, ապա հասարակագիտության հիմնական գործառույթը անձի ստեղծումը եւ դաստիարակումն է: Հասարակագիտության ուսումնասիրումը սովորողներին կօժտի ինքնուրույնությամբ, որի շնորհիվ ուսուցումը ոչ թե կընկալվի որպես պարտադրանք, այլ ' որպես յուրաքանչյուր մարդու հնարավորությունները մեծացնող գործոն: Սովորողները կհասկանան ինքնադաստիարակման գաղափարը եւ կգիտակցեն իրենց պատասխանատվությունն իրենց իսկ առջեւ որպես մշակութային ինքնարարումի ձգտող էակներ: Հասարակագիտության դասավանդման արդյունքներից մեկը կլինի այն, որ անձնային հարթությանմեջ մարդիկ կդադարեն թաքնվել հասարակության կամ որեւէ խմբի հետեւում եւ կհասկանան իրենց անհատականության զարգացման և դաստիարակության գործում իրենց իսկ անփոխարինելի դերը:

Դաստիարակությունը չպետք է դառնա մանկավարժական գործունեության առանձին տարանջատված տարր, այլ պետք է լինի մանկավարժական գործունեության անհրաժեշտ բաղկացուցիչ մաս, որը ինտեգրված է ուսուցման եւ զարգացման ընդհանուր գործընթացում:

Հասարակագիտության ամբողջական ուսուցումն արդի հասարակական իրողությունների հրամայական պահանջն է քանի որ նրա գործնական հետեւանքները անչափ կարեւոր են նոր սերնդի ճիշտ դաստիարակության համար: Գործնական առումով շատ կարեւոր է, որ աշակերտներն ի վիճակի լինեն նախագծեր իրականացնել, որոնել- գտնել համայնքին հուզող խնդիրները, առաջարկել դրանց լուծման ուղիներ ու հետամուտ լինել այդ ամենին: Գործնականում կարեւոր է, որ սովորողների մեջ ձեւավորվեն ակտիվ քաղաքացիության դիրքորոշում, իրավունքները պաշտպանելու, ինչպես նաեւ պատասխանատվությունն իրականացնելու կամք եւ հմտություններ: Հեռանկարում միջնակարգ դպրոցն ավարտող սովորողները պետք է օժտվածլինեն իրականությունն ինքնուրույն վերլուծելու, սեփական մոտեցում եւ գործողություններ մշակելու կարողությամբ:

Հասարակագիտության ուսուցման ժամանակ պետք է արծարծվի նաեւ հասարակական հարաբերությունների իդեալի խնդիրը եւ աշակերտը պետք է ընկալի իդեալների իրականանալի լինելը եւ հետամուտ լինի դրանց իրագործմանը: Քանի որ այսօր Հայաստանում արդեն ձեւավորվում է քաղաքացիական հասարակությունը, սովորողները պետք է

հասարակագիտության ուսումնառության ընթացքում գիտակցեն իրենց դերը ապագա քաղաքացիական հասարակության ձեւավորման գործում: Հասարակագիտական ուսուցումը պետք է արժեւորի անհատների ու խմբերի ներդրումը ժողովրդավարության հաստատման գործընթացում:

Գրականություն

1. Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական տեսական եւ գործնական հարցերը, Մասիս 2011,

2. Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը, <<Մանկավարժական նախաձեռնություն>> հայկական ասոցացիա, Երեւան 2001թ

3. Дьячяенко В. К. О преобразовании дидактики в науку // Колективный способ обучения.-2000. No 4.—с. 60-64

4. Дьячяенко В. К. я всегда прокладывал <<лыжню>> .....интервью // Колективный способ обучения. --2007. No 9.-с.-207-220

5. Jossay Bass, “Bringing the Internet to school”, 2002, page 436-439

6. Michael Grahame Moore, William G. Anderson, “Handbook of distance education”, 2003, page 17-18

7. Գ.Նժդեհ, Ընտիր երկեր, 2007թ, Երեւան

8. Малькова, Школа и педагогика за рубежом, М., 1987,

9. Գ.Նժդեհ, Հատընտիր, 2006թ., Երեւան

10.Գեւորգյան,ՀամլետԱ.,Հասարակագիտությանհիմունքներ:Դասընթացի հայեցակարգ եւ ծրագրի նախագիծ /Հ. Ա. Գեւորգյան, ՀՀ ԳԱԱ Փիլ. եւ իրավունքի ին-տ, ՀՀ ԿԳՆ Կրթ. բարեփոխումների կենտ/, Երեւան, ԿԲԿ, 2003:

11. Գյուլբուդաղյան Ա. Վ., Հարությունյան Կ. Ռ., Թովմասյան Տ. Ա., Հասա-րակագիտություն: 8-րդ դասարան: Դասագիրք հանրակրթ. հիմն. դպր. համար, Երեւան, Զանգակ, 2013:

12 ԳյուլբուդաղյանԱ.Վ.,ՀարությունյանԿ.Ռ.,ԹովմասյանՏ.Ա.,Հասարա-կագիտություն: 9-րդ դասարան: Դասագիրք հանրակրթ. հիմն. դպր. համար, Երեւան, Զանգակ, 2014

13. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թովմասյան Տ., Հասարակագիտություն: 8-րդ դասարան, Երեւան, Տիգրան Մեծ, 2013:

14.. Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Հասարակագիտություն: 9-րդ դասարան, Երեւան, Տիգրան Մեծ, 2014:

15. Պետրոսյան Ս. Ս., Խաչատրյան Ս. Հ., Խաչատրյան Հ. Վ. եւ ուրիշն., Հասարակագիտություն: 10-րդ դաս., Երեւան, Տիգրան Մեծ, 2014:

16. Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Հասարակագի- տություն: 11-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի բոլոր հոսքերի համար, Երեւան, Տիգրան Մեծ, 2015:
17.Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., Հասարակագիտություն: 12-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի բոլոր հոսքերի համար, Երեւան, Տիգրան Մեծ, 2011:
18. Հասարակագիտություն: Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ եւ ծրագրեր /Լրամշակ.՝ Ա. Վ. Գյուլբուդաղյան, ՀՀ Կրթ. եւ գիտ. նախ., Կրթական ծրագրերի կենտրոն/, Երեւան, Ա.Հ., 2009:
19. Հանրակրթական հիմնական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչ եւ ծրագիր (8-9-րդ դասարաններ), ՀՀ Կրթ. եւ գիտ. նախ., Կրթական ծրագրերի կենտրոն/, Երեւան, Ա.Հ., 2012: